



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5835(2f)

23502-

23504 (3g)

5211 (7 f und)

8073-8075  
(9 f und)

929

5-96



# ԿԱՐՈՏ ԵՄՔ

---

ԲՈՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գ. Ե. Ր. Մ. Ա. Ռ. Ա. Յ. Ա. Յ.

Յ. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

Ա. Բ. Տ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

Ի ՀԱՐԱՆԻ ՀՆԹԵՐՑԱԾՈՒՐՈՑ ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅՈՐՓԱՔԵՑ, Ե 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1880

ԿԿ. Կ. ՊՈՂԻՆ

1880

13556

1364  
40%

# ԱՄ. ԳՕՏ ԵՍՔ

ԲԱՆԱՒՕՍՈՒԹԻՒՆ

Գ. Ա. Մ. Մ. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Ֆ. Վ. Ա. Վ. Վ. Վ. Վ. Վ.

ԱՐՏԱՍԱՆԵԱԼ.

Ի ՀՅՈՒԱՆԻ ԸՆԹԵՐՑԱԾԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅՈՐԲԱՅՔԵՅ, Ի 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1830

կարօռ եմք, եղբարք, կարօտ  
եմք, Ասդ ազիոպորմ հառաջանքը  
ոչ այժմ առաջին անգամ կը լսէք  
դուք, Տեարք իմ և Տիրուհիք, որ  
կարօտութեան նալաստելու համար  
կարգ ադրուած երեկոյթի մը փու-  
թացիք գալ, և կարօտելոց ի դար-  
ման նու իրեցիք եւս այն տուրքը  
զոր Ընթերցասիրոց Ընկերութեան  
գործադիր ժողովոյ Գերազատիւ  
Աշենապետը և Մեծադատիւ Ըն-  
դամք ձեզմէ խնդրեցին: Կարօտ  
եմք, կարօտ եմք, որտառուչ առ-  
զազակը հնչեց ձեր ականջը բրդ-  
իսեալ ինուաղեալ հագագէ սովա-  
լուկ մարց վանայ և Ալաշկերտի  
և մերձակայ գաւառուաց Հայաւ-  
տանի: և դուք որ ձեր առատա-  
տուր նուէը, ինչպէս վասահ եմ,  
շդանդաղեցայք յանձնել ի ձեռու  
պատուիրակաց Պատրիարքարանի

իշխանութեամբ հաստատելոց,  
դուք և այսօր եկիք հսու, որ երբ  
դեղեցիկ երեկոյթի մը հանդիսա-  
կից կ'ըլլայք, դարձեալ փոքրիկ  
դումար մը հայթայթած ըլլայք.  
դումար մը՝ որ ինչչափ ալ փոքրիկ,  
բաւական պիտի ըլլայ դարձեալ  
դոնէ ընտանիք մը կամ երկումար-  
դակուլ որկորոյն ժանտութենէն  
ազատելև քանի մը Հայ պահպանել  
ի վայելս Հայութեան: որ առանց  
այս նուէրին չպիտի կարենային  
գտնալ իրենց մաս ինկած ողե-  
պահիք հացը, որ կեանս պիտի  
տայ անսնց ամեն ճարէ և ճարա-  
կէ յուսահատած ժամերնին:

Ցեսաք դուք ժանոցմանց վը-  
րայ ի ՆՊԱՍ ՍՈՎԵԼՈՅ վերնա-  
գիրը, Ընթերցայք անոր ներքեւ  
կՈՐՈՑ ԵՄ Ք Հեծեծանաց ճայնը,  
ուլաց պք դուք հարկաւ ձեր մտօք

զանայ և Պոյազիտի ընդարձակ գաշտերը բաղմամարդացնող Հայ գիւղօրէից մէկուն, և գծագրեցիք ձեր երեւակայութեան մէջ աղքատին մի հիւղ։ Զորս խարխուլ որմեր հազիւ մարդաչափ երկրէ բարձրացած՝ կը վերցնեն առաստաղ մը կաւով և խորիով ծեփեալ այլ այժմ և ոչ իսկ այդ կ'երեւի, վասն զի ձիւն սպիտակ կը պատէ դայն և կը ծածկէ։ Ա՛յլուսամուտ ունի որ ներսը տեսնես, և ոչ լոյս կը լուսաւորէ անոր բնակչաց երեսը, կիսաբաց գունէն հետաքրքրութիւնդ կ'ուղես լեցնել, կարծեա թէ ներքին բնական աղդում մը քեզ կը գրդէ այդ կողմը շեղիլ։ Մի գարշիր, մի զըդուիր, եղբայր, մօտեցիր և զըլուխդ ներս խօթէ։ տես յարդէ խշտի անկողին մը հողոյն վրայ սիմոււած։ Քովը պղողիկ մէկ մարան՝ բոլորովին դատարկ ստոմանը իւղ չտնի, և կաթուայն կրակի վրայ չէ։ մանկամարդ կնկան աղքատիկ զդեստները գետինը նետուած են, իւր ամուսինը ժողվեց ու առաւ ինչ որ իւր կնոջ վերջին մայրենի և հայրենի յիշտակաց զարդելն են, առաւ ու տարաւ ինչ որ կրնար արժէք մը ունենալ, որ դոնէ չափ մը ցորեն կամ քանի մը նկանակ հաց ճարէ և իւր տունը բերէ։ Օր մը անցաւ և աւելի, չեկաւ ակնկալեալ պարէնը, չտեսնուեցաւ անձկացեալ

տանուտէրը, չդարձաւ մանկամարդ ամուսինյն սրտին հատուրը Ռ'ն, բարէ, յուղկահար աւաղակը տեսաւ զնա ի հետուատ, և փոքրիկ գումարը յափշտակելու բաղձանօք յարձակեցաւ խեղճին վրայ։ Սա՞ որ ուրիշ անգամներ սովորած էր ինչքէն հրաժարիլ որ կեանքը պահպանէ, երբ հասաւ այն կէտը որ բոլոր իսկ կեանքն նոյն իսկ ձեռքն եղած ինչքն էր, միցեցաւ վրայ ինչպէս որ իւր կենաց վրայ կը միցն որ, կատաղեցաւ աւաղակը անօրինակ դիմագրութեան դէմ, քաշեցզէնքը և զրաւեց ի կենաց անզէն հակառակորդը, որպէս զի տիրանայ այն գուղնաքեայ իրաց։ Ո՞՛, չարաշուք յուղկահար, գազան մարդակերպ՝ քան մարդ գաղանաբարոյ։ կարծեցիր արդեօք այր մի միայն սպանանել։ ոչ դիտին զոր զգետնեցիր և անշնչացեալ ձեռքերէն նշին աւարը թափեցիր, իւր կենաց մէջ ունէր չորս եւս կեանքեր։ ծերունի մայր մը անկարող ի գործ, որ երկու զաւակները յլածէ ի պանդխտութիւն, և երրորդին քով պատապարեալ կ'ապրի, մանկամարդ ամուսին մը որ կը պաշտէ իւր սիրելին, և իւր տկարութեան նայելով ծանր աշխատանօք կը պատրաստէ ընտանեկան պէտքերը, և աւելորդ վայրկեաներէն օդուտ կը քաղէ իւր ձեռագործով իւր տան պահ-

պանութեան օժանդակել։ Հըեշտակային օրիորդ մը դեռ մատղաշ ու քնքուշ, իւր ծնողաց մը խթարութիւն և դիզացեալ չարիքը մոռցնելու միմիայն դարման, երբ իւր քաղցր դայլայիկներով յինքն կը գրաւէ իւր հօրն ու մօրը և հանւոյն ուշադրութիւնը, և անոնց ցաւալի սիրտերը իւր անմեղխօսքերովկ'օփոփէ։ Մանուկ մը գեռահաս, գընտակի մը մաեղէն, առոյդ և կայտու, ի սերմանէ քաջացն Հայոց, որ թերեւո օր մը պիտի վառուի ի սէր և ի գրգիռ աղդային և պիտի ըլլայ իւր ազգին ըմբիչ անվեհեր։

Այլ աւաղ թշուառութեանս ատենը անցաւ և վերջին չնչոյն պահպանող ըլլալիք պարէնը չերեւցաւ։ մօրանին ամէն կողմը որոնեցին, առն ամէն անկեւնը քրքրեցին։ վշրանք չմնաց թէն փոշոտած և փորփոսած՝ զոր համադամ կարկանդակի պէս չափեցին այն սիրուն արարածք։ Մայրըն կարծելով թէ յերմութիւն մնունդ կուտայ, զրկեց ու դըգուեց զանոնք, իւր ծոցին վրայ հանգչեցուց, ինքն ալ նուազելու հասաւ, այլ զաւակաց ներքին քաղցը չզարթուցանելու համար կը լուէ։ Պիտի հառաջէր ցաւոյն, այլ կը զսպէ զինքն մայրն առաքինի և որդեսէր։ Զնայիր այլ ևս պառաւին վրայ, որ լուռ

և անմուռնչ կծկոտած՝ յայտնի չէ թէ կենդանի իցէ տակաւին։ իւր զաւակաց վրայ դարձուցած է իւր ուշը և կարծես թէ անհամբերութեամբ անոնց ողբն ու լացքը կ'սպասէ, վասն զի ողբն ու լացքը պիտի հաւաստեն իրեն թէ այն տկար արարածք կը դիմանան տակաւին և դեռ շունչերնին վրանին է։ Կը յուսայ ի յուսահատութեան թէ պիտի դառնայ իւր տէրը բեռնաւորեալ ցորեն ու հաց՝ ստացեալ զնով իւր սրբազնն և նուիրական զարդուց, որոց վրայ կապեալ էին իւր սրտին ամէնէն անոյշ և ամէնէն փափուկ յիշատակ ները։

Տեսեր զայդ հոգ ովլ և փղձկեցար, եղրայր տեսեր դու հոգ ովլ խեղճ մայրը՝ ոդեսպառ և նըւազեալ, կ'ուզէնա զոչել առ քեզ կողկոզագին։ այլ շունչը չելլար։ նայուածք մը միայն կը նետէ, որ մինչեւ քուներքին զգածումներդ կը թափանցէ։ այն լուռ նայուածքը ճարտար խօսքերէ աւելի զօրաւորէ։ թէ որ ձայն շլսուիր, շըրթանց շորթում մը կը տեսնուիր։ բարբառ մընէ այն որ աշաց բարբառոյն կը ձայնակցի։ այն ձայնը ականջդ չլսեր, բայց սիրոդ կ'իմանայ։ այդ ձայնը ներսդ լըթափանցէ։ անոր ուշ դի՛ր, անկեցէ որ արձագանք մը կը հնչէ։ որ կ'ըսէ և կը լուս եմք, եղբայրք։ Խուլեզի, թէ կարես, այսպիւ

մի ձայնի մը : անզգայ կեցի՞ր , թէ կարես , այդպիսի տեսարանի մը . անդործ մնացի՞ր , թէ կարես , այդպիսի առթի մէջ . երես դարձնուր , թէ կարես , այդ առվալուկ արարածներէ՝ որ եղբարք քո են համարիւն . անարդէ , թէ կարես , խեղճ մօր վիճակը , և մի՛ փութարտալ նմա ինչոր քովդ ունիս , արծաթ և ոսկի , ուտելի և ըմպելի , որպէս զի անողորմ մահու ժանիքներէն ազատես այդ անպարտ կեանքերը՝ որ թէ հաւասար չեն իրերաց մէջ , այլ հաւասարապէս քու բարի զգածմանցդ կըյանձնարարեն ինքինքնին : կարօտ եմք . կը գոչեն եղկելիք . կը գոչեն գոզցես ի լուռթեան , վասն զի խեղճութեան մէջ ձայն բարձրացնելու կարողութիւն ունենալի խոկմէծ բարութիւն մի է , որուն կարօտ են այդ թշուառք՝ որ եղբարք են մեր , և ոչ թէ օտարք :

0<sup>o</sup>n , ցուցնեմք մեք արդեամք եղբայր լինիլ : Եղբայրդ անօթի եղած ատեն և քու ձեռքդ ալ նկանակ մը հաց գանուած ատեն , հնար է երբէք որ բերնիդ հացէն կէսը կտրելով իրեն չտառ : Ահա ուրբեմն , եղբայրք , ահա մեր եղբայրներն անօթի և նուալեալ կը տառապին ի վան , ի Պայազիս , ի Պաշտալէ , յԱլաշկերտ , և յամենայն երկրի որ այս քաղաքաց շուրջը կը գտնուի . մեք ալ հոս ուրախ եմք , թէ ոչ յղփացեալ ըլլալովը :

ամենայնի , գոնէ մեր ովէտքը առաւելովն լեցնելու կարող ըլլալով . տնիմք մեք մեր ձեռքը խոչոր նը կանակ մը , երբ մեր Հայաստանցի եղբայրը կը կարօտի անոր մէկ փըշը բանքին : Տուբէնք մեք որդեօք մեր հացին կէսը , գոնէ քառորդը , դոնէ հարիւրերո՞րդը :

Ինչո՞ւ ուրանամ , եղբայրք , եղածք սակայն ինչո՞ւ ալ ըստեմ ճշշմարտութիւնը : Ստորագրութիւններ բացինք , յանձնաժողովներ և մասնաժողովներ կարդեցինք , ուատուիրակներ դուռնէ դուռպարաեցան , լրագիրք նուլը բատութեան յորդորակներ հրատարակեցին , քանի՞ նկանակ հացքաշեցաւ կարօտելոց . քանի՞ պարկ յորեն հասաւ հարու ածեալ գաւառներու . քանի՞ գահեկան բաժնուեցաւ իւրաքանչիւր սովորոց : Շուտ ու շատ . գոչեցի ես ուրիշ անգամ սոյն այսնիւթոյն վրայ խօսելով . շուտ ու շատ երանի թէ նուելներ հաւաքուէին . այլ գեռ կը գանգաղիմք , գեռ կը վնասը ուեմք թէ ինչպէս հնար է նուազագոյն նուերով աղատիլ , երբ պատուիրակք մեր գուռը կը բաղիւնն Նշանաւոր գումարներ ալ տեսունք մեք յիշատակեալ ցուցակներու մէջ , այլ ստէգ այնպիսի անուանց գիմաց նշանակեալ էին՝ զորս այդ թուանշանները պատուել բաւական չէին :

բայց ասոնց ըստածն ալ դիտեմ.  
— Ո՞ր մէկ կարոտութեան հաս-  
նիմք, որ մէկ պարապլ լեցնեմք,  
որ մէկ նպաստը առատաձեռ-  
նեմք. ամեն օր, ամեն ժամ հան-  
գանակութիւն մը դիմացնիս կ'ել-  
լայ՝ նոր ձեւերով և նոր անուն-  
ներով, և ամենուն ալ պարտաւոր  
կ'ըլլամք նպաստել. բնական է որ  
չափերը նուազելու պարտաւոր-  
ուիմք : —

Եթէ անաշառութեամբ պիտի  
խոսիմք ի մասինս, մէկդի պիտի  
թողումք այդ խնդրոյն մէջ մաս-  
նաւորութեանց և անձնականու-  
թեանց կէտերը, պիտի բարձրա-  
նամք այդ առթիւ մեր աղգային  
վիճակին վրայ, և պիտի ըսեմք  
թէ այն կինը որ կողկողագին կը  
հառաջէ իրեններովը մէկտեղ՝ թէ  
«կարօտ եմք», չէ այս անուն վա-  
նեցի կամ Ալաշկերտցի Հայ մայր  
մը, այլ է նոյն ինքն մայրս մեր  
Հայաստան։ Եթէ սովոր չարալուկ  
կը տագնապէ այսօր Հայաստանի  
մէկ մասը և իւր ահռելի ժամիք-  
ներով կ'ապառնայ յարձակիլ նաև  
միւս մասանց վրայ, եթէ նախա-  
հոգ զգուշութիւնք և իմաստուն  
միջոցք վերահաս վտանգին առա-  
ջը չառնուն, բայց այս կէտը մի-  
այն չէ որ Հայ սիրտերուն մէջէն  
«կարօտ եմք» արձագանքը կը հըն-  
չեցնէ։ Որչափ և կը խառնեմք  
ինդիրները, որչափ և կը խոյա-  
նամք բազմանաց բարձունքը, որ-

չափ և կը թուեմք պիտոյից տե-  
սակները, միշտ սիրտերու վրայ  
սաստիկ թերահաւատութիւն մը  
կը ծանրանայ, թէ ինչպէս պիտի  
կարենամք բաւականանալ մեք այդ-  
պէտքերը լեցնելու, մեք որ կա-  
րօտ եմք, մեք որ այդ պիտոյից  
համեմատ արտաքին միջոցներ չու-  
նիմք :

Հայութեան վիճակը բացատրե-  
լու սոտէպ ես բաղդն ունեցայ, և  
միշտ անոր յուսալից կողմերը մէջ-  
տեղդրի։ Հայութեան համար չեմ  
մարդարէ վայագոյժ՝ անոր թըլ-  
ուառութիւնները աւաղելու սահ-  
մանուած և թերութիւնները համ-  
րելու պաշտօն առած, այլ ընդ-  
հակառակն կը սիրեմ, ինչ որ գե-  
ղեցիկ է և յուսագրական՝ զայն  
լուսաբանել և ապացուցանել, ոչ  
մնուի ակնկալութեամբ զանձն և  
զայլս խարեւով՝ այլ յաւետ աշ-  
խատելով իրաց իրականութիւ-  
նը փաստերով և նշաններով եւ  
ցոյցերով գոգ շօշափել տալ ա-  
մենուն։ Այսօր այդ ակնկալու-  
թիւնը աածելու համար, Հայող-  
դիք՝ ոչ իմ և ոչ այլոյ ուրուք խօս-  
քերուն կարօտութիւն ունին։ այ-  
սօր Հայոյն ապագային զգ ածու-  
մը՝ ամենուս համար ալ բնական  
աղգեցութիւն և գոգ բնածին  
գաղափար մը եղած է, որուն հա-  
մար ուսուցիչ և թելադրիչ ունե-  
նալ հարկ չէ։ Նոյն բնական կեր-  
պով ալ կը մղուիմք մեք զանազան

գործառնութեանց որ մեր ապա-  
դային ապահովութեան և բար-  
գաւաճման պիտի նպաստեն :

Սակայն դուք՝ որ ազգային գոր-  
ծոց ոչ ըսկ եռանդեամբը կը պա-  
րարիք, այլ ամեն ազգային գոր-  
ծոց մէջ բաւական ընդարձակ  
գործակցութիւն ունեցած էք,  
դուք որոց մէջ են այնպիսի  
անձինք որ ազգային գործոց  
և ժողովոց կ'առաջնորդեն և  
կը գահերեցեն, դուք, ունկն-  
դի՛ք իմ, անձամբ զիործ առ-  
եալ գիտեք և շատերու դուք իսկ  
կը նայք ուսուցանել, թէ մեր ա-  
մենէն գովանի ձեռնարկներուն  
մէջ և մեր ամենէն կարևոր կե-  
տերուն մէջ միջոցներու նուա-  
զութեան դժուհի պարագայն կը  
զդամք . և երբ կարծես թէ կը  
կարծէինք ձեռքով երկինքը բըու-  
նել մեր ըղձից խոյանալուն հե-  
տեւելով, ձեռնունայն կը մնամք  
և դժուարութեանց ներքեւ, վասն  
զի կարօտ եմք, կարօտ եմք մի-  
ջոցներու :

Զեր մէջէն ելան՝ որք մօխիր  
գարձած կրակի մը մէջ մնացեալ  
կայծերը ժողվելով, վերստին ըն-  
կերութենական հոգւոյն արձար-  
ծելուն նպաստեցին, և Հայաս-  
տանի զանազան գաւառուաց և  
մասանց մէջ գաստիարակութեան  
օժանդակելու համար ընկերու-  
թիւններ հաստատեցին, և միջոց-  
ներ ժողվելով վարժարաններ բա-

ցին, և անոնց պահպանութեան  
և շատնալուն համար ճգնեցան :  
Թո՛ղ անոնք ըսեն թէ ինչ աշխա-  
տութեամբ՝ ի՞նչ կրցան հաւաքել.  
ինչ բաղձանքով՝ ի՞նչ արդիւնքներ  
ունեցան, և ինչ միջոցներով՝  
ի՞նչ գործ իլցու ընծայեցին : Ըն-  
կերութեանց հաստատած վարժա-  
րաններուն թիւը, անոնց իւրա-  
քանչիւրին համար սահմանեալ  
ծախուց գումարը, և գաստիա-  
րակութեան առաքեալ ըլլալու  
որոշեալ անձանց թոշակը, թո՛ղ  
ի քննին առնուին և կշռոյն  
մէկ կողմը զետեղուին, և միւս  
կողմն ալ դրուին ջանքն ու փոյ-  
թը, իդն ու բաղձանքը, աշխա-  
տանքն ու տառապանքը, ճիգն  
ու քրտինքը, զորսընկերութեանց  
անդամք, մանաւանդ գործադիր  
ժողովոց անդամք թափեցին . և  
ամեն անաշխառ անձ գատէ թող,  
թէ այդչափ աշխատանք՝ այդչափ  
արդիւնք միայն կընային պտղա-  
բերել: Ա՛չ բնաւ . շատ աւելի  
մեծ, շատ աւելի զօրաւոր, շատ  
աւելի արդիւնաւոր, շատ աւելի  
պտղաբեր պէտք եր որ ըլլային ըն-  
կերութեանց յառաջադիմութեան  
համար եղած աշխատանքն ու  
թափուած քրտինքը, սակայն ըլ-  
յաջողեցան դժբաղդարար . և ե-  
թէ եղածն ալ մեծ գովեստից ար-  
ժանի է, սակայն ակնկալութենէ  
նուազ ըլլալ փաստ մի է որ մեք  
գեռ կարօտ եմք, կարօտ եմք մի-  
ջոցներու :

Ազգային ընդհանուր յառաջաւագաւ դիմութեան համար քանի քանի նոր ճանրաներու մէջ չմտանք , և ինչ նոր կերպ փորձերու չպարտաւորեցանք : Ես չեմուղեր պատմել թէ երկու տարուշնէ ի վեր ինչ չափ ո ործ կատարուեցաւ որպէս զի Հայաստանի բարօրութեան պէտք եղած դարմանները դործադրուին , և նժրքուստ և արտաքուստ բարեկարգութիւններ կատարուին , և եղիկին և թշուառն Հայաստան յաջողի խնդութեան օր մը տեսնել . զրկանաց վերջ տրուի և հարստահարութեանց ժամանակը գաղաքի : Մեր տեղեկադիրք և բոլոքագիրք և աղերսագիրք ի լուր աշխարհի կարգացուեցան , և մեր պատուիրակը ի տես ամենեցուն ըրջեցան և խօսեցան : Վերստին դուք ինքնին դատաստանը ըրէք . կատարեցի՞նք մեք այն ամեն միջոցները զօրս մարթ էր նոյնպարագաներուն մէջ կատարել կամ թէ այսօր իսկ չկա՞ն տակաւին միջոցներ զօրս ի գեալ է կատարել ի նպաստ նոյն խնդրոյն կամ պէտք է փութեցնել որպէս զի բարեգէպ . առիթները անպատուղ չանցնին : Ի՞նչ է ուրեմն պատճառը որ ստէպ մեր ձեռքերը կը կաշկանգէ , և երբ գիտեմք իսկ կարեղը , որոշած եմք հարկաւորը , և կը տեսնեմք պէտքը , տակաւին չեմք կարող զայն ար-

դեամբ կատարել : Այսօր Հայերը ոչ չկիտանալուն և ոչ չտեսնելուն համար պարտաւոր են : Եւ երբ դիտնալով և տեսնելով իսկ չեն կատարել , որովհետեւ չուղելնէն չէ , այլ չկրնալնէն , նովին իսկ կը հաստատեն թէ կարօտ եմք , կարօտ եմք միջոցներու :

Ես , ունկնդիբը իմ , այս երեւկոյ մէկդի թողած եմ վերացեալ գաղափարաց կարգը , բացարձակ տեսութեանց ասպարեզը , գեղեցիկ խորհրդածութեանց շրջանը , բարձր բաղձանաց պարունակը . ես չեմ եկած քարոզել ձեզի բարին ու գեղեցիկը ու ճշմարիտը , ինչչափ որ ալ այս նիւթերը իմ մտացաւ ւելի հաճոյ ըլլան և ձեր լսելեաց աւելի ախորժ . այս երեկոյ ես նիւթական և դործնական մարդ մը կ'ուղեմ դառնալ . ինչչափ որ իմ վիճակիո և ունակութեանս կրնայ յարմարիլ , թէպէտ և վիճակս և ունակութիւնս զիս այս ասպարեզին վարժեցուցած չըլլան : Ես նիւթական միջոցաց խօսրը պիտի ընեմ . որովհետեւ ճշմարիտը խօսելով , ստէպ ամենէն վերացական և ամենէն աննիւթական խնդրոյ վրայ վիճած կամ յոդնած ատեն , խօսքն ու դործը կ'երթայ այն նիւթական միջոցին վրայ կը յանգի . և մեր ամենէն կենսական և ամենէն ազնիւ մէկ բաղձանքին վրայ ըրած ջանքերնիս և թափած քրտինքնիս և յոդնեցու-

ցած խելքերնիս, այս՝ եղբարք, այն նիւթական մետաղին դոյութենէ կախուած է, որ այժմ իբր ամենակարող միջոց ամեն ձեռնարկութեանց հոգին է: Քանինե՞ր, թո՞ղ ըսեն որք փորձառու են, քանինե՞ր դեղեցիկ խորհուրդ մը չը յշացա՞ն, աղնիւ բաղձանք մը չունեցա՞ն, բարձր նպատակ մը չորշեցի՞ն, և վերջէն իրենց իսկ անձնական տուժիւ, տուժիւ ստեղծք քրտանց և անպատուղ ջանից, չը խոստովանեցա՞ն, թէ ի զուր է այդպիսի ձեռնարկութեանց միսիլ, ցորչափ գիտեմք թէ կարօտ եմք, կարօտ եմք միջոցներու:

Խնդիրը կարգաւոր կերպով մէջ տեղ դնեմք, որպէս զի թէ բացատրութեան և թէ իմացողութեան ըստ արժանւոյն նպաստեմք, և մեր կարօտութեանց սահմանը և պայմանը ճշդակի որոշուին: Կարօտութեանց կ'ըսեմ, ոչ թէ իմանալով այն ամէն պակասները զորս ունիմք, դաստիարակութեան, բարեկարգութեան, յառաջադիմութեան, արհեստից, վաճառաշահութեան, բարձրեկեցիկ կենաց, և ադդայնական հանգամանաց, այլ կ'իմանամ միայն միջոցաց կարօտութիւնը, որ ինքնն իրեն պարզ է և յայտնի, վասըն զի զօրաւոր և հասարակ միջոցի մը վրայ կը յանդի, որ է դրամական կարողութիւն ընդ-

հանրութեան պիտոյից նկատմամբ. և երբ այդ կարողութիւնը լիովին հոգացուի, կարծես թէ մեծ աշխատանքը լրացած է, և միացեալ կարօտութեանց բոլորին ալ դարմանելու ժամն ու պարագայն հասած է, և կը մնայ միայն պատրաստեալ ատաղձը իւր տեղը զետեղել:

Կարօտ ըլլալնուս խոստովանութիւնը ըրի ես ի դլուխ խօսից, յեղյեղեցի զայն ստէոլ մինչեւ ցարդ, և հարկ չկայ միւսանդամ անոր հաստատութեան ձեռնարկել: Իսկ թէ կուք ևս պիտի ձայնակցիք ինձ աներկեւան եմ, վասն զի գիտեմ թէ դուք աղդային գործոց օտար չեք և աղդային իրաց վիճակին վրայ անձնական փորձառութիւն ունիք: Կարօտութեանց տարածութեան գալով, որովհետեւ մասնաւորք ընդհանրութեան բաղկացուցիչք են, և ընդհանուր աղդային արկեղաց և հաստատութեանց հանդանակողք՝ նոյն ինքն անհատք են, ապա երբ ընդհանուր առմամբ « կարօտ եմք» ը կ'արտասանեմք, նովին իսկ կ'իմանամք թէ նաեւ անհատք աղդին կարօտութեան մասնակց են, որովհետեւ այլազգ ընդհանուրը կարօտ ըսել հակասութիւն կ'ըլլար, կամ թէ հակասութիւն ոչ, գոնէ չարութեան ամբաստանութիւն, վասն զի ը-

սել կ'ըլլար թէ անհատք որ կարող են՝ իրենց տուրը կամ նուէ բը կը չափաւորեն կամ կը զլանան, և հասարակաց պիտոյից համար կտրեւոր միջոցը չժողվուիր և չըհայթհայթուիր՝ ոչ ի չկայէ այլ ի չկամէ :

Այլ որով իմաստիւ արդեօք կ'արտստանեմք մեք «կարօտ եմք» խոստովանութիւնը, երբ Հայութեան արդի վիճակին վրայ կ'ըխօսիմք, արդի վիճակին վրայ կը սեմ, վասն զի այսօր անցելոյն վրայ տեսութիւններն իսկ իրրու վերացական և իրը անգործնական ինչ մեկդի թող տալ որոշած եմ: Ակնարկեցէք անգամ մը, ունկնդիրք, իմ Հայութեան վրայ, և քննեցէք իւրաքանչիւր գաւառի և քաղաքի, թաղի և գիւղի, ագարակի և շինի վիճակը: Ինչ հարստութիւն ունին այսօր Հայ անձեր. Ի՞նչ դրամ կը պարունակեն այսօր Հայ ձեռքեր. ի՞նչ ունեւորութիւն ստացած են այսօր Հայ տանուտէրեր: Ովհճակադրական տեղեկութիւնք մեղ չեն ներկայացներ կարեւորը՝ որ կարող լինմք ստոյգ ծանօթութեամբք գիտնալ և ցուցնել թէ Հայն անհատաբար առեալ ո՞ր աստիճանի կարօտ է: Եթէ որ աստիճանի կարօտ ըլլալը որոշել դժուարին է, այլ դժուարին չէ հաստա թէտել այսօր նաև անհատաբար առեալ մեր ազդը շատ և շատ կարօտ վիճակի մէջ է:

Աղդութեան բնական մարմնոյն բազկացուցիչք՝ Հայաստանի և կիւլիկիոյ և Փոքր Ասիոյ Հայ բնակիչք են, ինչպէս որ ամէն Հայ զայդդիտէ: Իսկ Հայն դաւառացս մէջ աղքատ է և եղկելի. զան զի աղքատութենէ ելլերու համար հարկ ունի մշակել և ժողովել և վաճառել. իսկ իրեն ո՛չ մշակելու դիւրութիւն արուած է, ո՛չ ժողովելու ապահովութիւն, և ո՛չ վաճառելու կերպ և միջոց. ուստի որեմն կարենայ դրամ հայթայթել:

Եթէ և ամեն կերպ դժուարութեանց յաղթերով ջանայ ոք իրեն պահպանութեան կարևորը պատրստել, և ոչ իսկ համբարածը վայելելու վստահութիւն ունի. յեղակարծ կը համենի աւաղակը, բռնութեամբ կը կորդէ կաշառառուն, և խեղճ Հայաստանցին աղքատ կը մնայ: Քաղաքաց մէջ կան առուտուրի տէր անձինք և ասոնց մէջ ու բաւական հանչգիստ առլրողներ. սակայն շատ հեռու եմք այն վիճակէն որ ումանց չափաւոր ունեւորութիւնը կարող լինի ընդհանրութեան աղքատութիւնը լլացուցանել. և սակաւք բաւական լինին բազմաց պէտքը լեցնել և պարաքը կատարել: Մայրաքաղաքիս մէջ ընդհանրութիւնը արհեստաւոր է, սակայն հնութեան կերպին աշակերտեալ շատերը, շատերն ալ

յետնեալ վիճակի մէջ, և զրկեալ  
այն հանճարէ որ նոր դարուս  
ճարտարութեան արդիւնքն է,   
քիչ աշխատանքէ շատ արդիւնք  
պաղաբերելով, և անպիտան կար-  
ծուած նիւթերէ և անշանակ  
կարծուած պարագաներէ մեծա-  
մեծ օգուտները յառաջ բերելուա-  
լով: Մաս մըն ալ կարող անձինք՝  
իբր անհամեմատ բազդ մը՝ պե-  
տական պաշտամանց զհետ զա-  
կատեալ, ոչ թէ լոկ սեղմեալ ու-  
նեւորութեան պարունակին մէջ  
կը մնան, այլ և ստէպ մեծամեծ  
գրկմանց կ'ենթարկուին:

Ուր են մեծամեծք որք երբեմն  
սեղանաւորութեամբ հոչակուած  
և այնչափ հարստութեանց տեր  
եղած, իրենց առատատուր նուի-  
րօք և ազդօգուտ շինութեամբք  
ազգիս երախտաւորներն եղան:   
Ազգը՝ յորմէ հետէ սահմանագրա-  
կան սկզբանց աշակերտեցաւ, չը  
կրցաւ տանիլ որ դրամը տիրու-  
պետութեան առիթ ըլլայ, չու-  
զեց այլ ևս նոյն պատիւը հարկիլ  
ունեւորութեան՝ զոր նախընթա-  
ցաբար կ'ընծայէր, և մեծամեծք  
որ ասկէ վշաացան՝ նուիրատուու-  
թենէ իսկ ձեռք բաշեցին, ևս  
առաւելոր հայրենական ժառան-  
գութենէ իրենց հասած անուան  
հետ՝ ոչ ևս զուգընթաց էր նաև  
ստացուածոց շատութիւնը, և  
շատ ընտանիք՝ որք իրենց հարը-  
տութեամբ և հարուստ երախ-

տեօք աշխարհաբարով եղած էին,  
այսօր հասարակ կարդ /ջած են.  
թո՛ղ զայնս որք կարօտութեան՝  
և մինչև իսկ յետին կարօտու-  
թեան մէջ կը դժուուին: Դարձաւ  
ըստ իմիք աղդին անւոյն շրջանը,  
և այն բարձր աստիճանը զոր ար-  
դին մէջ կը վայելէին երբեմն աղ-  
նուաղուն սեղանաւորք, այսօր կը  
վայելէն վաճառականք պատուա-  
ւորք ի ժողովրդական վիճակէ յա-  
ռաջ եկած՝ և իրենց քրաամբն  
և ջանիւք ընկերական բարձր վի-  
ճակին բարձրացած: արդիք ժո-  
ղովրդեան՝ ժողովրդեան վիճա-  
կին կ'աւոգահատեն և իրենց նը-  
ւիրաց դուռը դոց չէ: քանիցս  
հասարակաց պէտքը զայն կը բաղ-  
իէ: բայց ի՞նչ ընեմք որ ո՛չ ի-  
րենց կարողութիւնը անշափէ է,  
և ո՛չ անոնց գիմող կարօտութիւ-  
նը չափաւոր, որ այդ պիսեաց ձե-  
ռօք հնար ըլլայ բոլլը իսկ ազգա-  
յին պէտքերը լիովին լեցնել:

Ահա համառօտ նկարագիր  
Յաճկարնակ Հոյսոյն, որ ստուգիւ  
իրաւունք կուտայ ինձ համարձակ  
խոստովանիլ թէ կարօտ եմք: ևս  
առաւել երբ զայն բազդատու-  
թեան մէջ դնեմք մեր դրացի  
Յունական ազգին և անոր նուի-  
րատուութեանց հետ: Այնպիսի  
անձինք կան այսօր սոյն այս ազ-  
գին մէջ, որ տալու կարողու-  
թեամբ և տալու յօժաբառութեամբ  
ամենեցուն նախանձելի կը հան-

դիսանան : Ազդային հաստատութեանց և բարեգործութեանց համար իրենց ստորագրած գումարներն հարիւրաւոր և հաղարաւոր սկիներու կը հասնին . մինչ մերիները յաւէտ տամաւորներու սահմանին մէջ կը շրջին . և շատ ցանցառակի այդ թիւէն անդին անցնողներ կը գտնուին : Ես չեմ ուզեր ստգտանել զոք իրք յօժարութեան մէջ պակասաւոր , վասն զի յօժարութիւն չպակսիր և մերոցն , այլ միթէ մեղ ի՞նչ է որ կարողութիւն՝ յօժարութեան յարմար և համապատասխանող չէ ի նոսա :

Տաճկաբնակ Հայոց վրայ խօսքո չաւարտած պէտք էր որ քանի մը անձանց առատաձեռնութեան վրայ մասնաւոր յիշատակութիւն ընէի , որը կարող են նաև օտարազգի նորիրատուաց փառքը ըլլացնել . սակայն յատոկ անուններէ խորշելու սովորութիւնը յարդած եմ միշտ . և այսօր ալ նոյն սովորութեանս կ'ուզեմ հաւատարիմ մնալ :

Ուստաբնակ Հայոց մէջ , ի լրոյ գիտեմք , թէ չեն պակսիր նշանաւոր մեծատոններ , և որ ընտրելադպինն է , չեն գտնուիր ազքատք Հայազգեաց մէջ : Հայք օգուտ քաղելով շահելու գիւրութիւններէն և աշխատելու ապահովութիւններէն՝ գիտցած են մշակութեամբ և արհեստիւ իրենց

հանգիստ կեանք պատրաստել և տոհմականս գանձել իրենց քըրտամբ առողեալ աշխատութեանց մերմերէն : Սակայն միթէ կ'անիւրաւիմ մեր ուուսաբնակ եղբարց , եթէ խորհրդածեմ թէ շատոնց կ'սպասէինք մեք տեսնել զնոսա ի գործ . և իրենց ունեւորութեան արդիւնքը վայելել յօդուտ ընդհանուր Հայ ազդութեան և ի բարդաւաճանս լիկեալ և լքեալ գաւառացն Հայաստանի . և թէ գեռ շատ ևս յոյսեր ունիմք անոնց վրայ հաստատած . և այդ յոյսերուն կատարման անհամբերութեամբ կ'սպասեմք :

Կ'ուզէի մեր ուրիշ ազդայնոց վրայ ալ խօսիլ , որք նուազագոյն թուով ափոեալ կը դանուին ուշըիշ պէտութեանց մէջ , մանաւանդ ի Հնդիկս և ի Ռումինս Բարեկեցիկ են և ունեւոր ընդհանրապէս , սակայն ցարդ այդ հեռաւոր աշխարհաց Հայերուն նըւէրները չեն տեմնուիր ի կեդրոնի Հայութեան , տուեալ ի նպաստ այն ընդհանուր ձեռնարկութեանց որք պիտի ապահովեն Հայ ազդութեան գարդացումք և կըթութիւնը և բարօրութիւնը , մանաւանդ անդ ուր այս ամենայն առաւել քան յայլ տեղիս և գըեթէ բոլորովին կը պակսի :

Բայց գադարեցնեմ զննութեանց խօսքերը , զորս ի յիշատակ և եթ աստէն յառաջ կը բերեմ : Խօսե-

լու և քննելու և զննելու ատենը չէ այլ եւս , և ես արդէն ըսի թէ յերեկոյիս գոց պիտի մնան ինձի դէմ՝ և դոց պիտի պահեմ ձեզի դէմ՝ բացարձակ և վերացական ճշմարտութեանց տաճարին դուռները : Երկու կարեւոր կէտեր կը պարունակէ Ծիրօտ եմքըին դառն ճշմարտութիւնը՝ զոր կը քարողեմ . Պէտքեր շատ են , Միջոցներ քիչ են . այս երկու քանակոց արտադրեալն ալ կարօտութիւնն է : Պէտքերը քիչցնեմք , Միջոցները շատցնեմք . ասոնք պիտի ըլլան երկու ոկրնական դարմանները որովք պիտի բուժի կարօտութեան ախտը , և ցորչափ Հայե՛ր , ոյդ կէտը ուշադրութեան չէք առնուը , մի՛ կարծէք թէ ապադային վրայ դրած յոյսերնիդ յաջող ելք մը կ'ունենայ :

Քաւ յինէն աշխարհային ըսկըդրանց քարոզ ըլլալ , և ինքնինքու և վիճակս մոռնալով բարձրաբարբառ աղօղակել , թէ աշխարհիս ամենէն կարեւոր կէտը՝ արտաքին և նիւթական միջոցաց առատութեան վրայ է : Զեմուզեր մոռնալ , չեմ ուզեր ուրանալ՝ թէ հոգի և միտք և սիրտ ազնուագոյն մասեր են ի մարդն , և ասոնց համեմատ հարսանութիւնք և ճշմարտութիւնը՝ որք անանց են և աղնուական , կրօնք և դաստիարակութիւն և առաքինութիւն անուամբ ճանցուած բա-

ներն են , և այս կէտերուն բարգաւաճման համար աշխատելու պաշտօն ընդունած եմք յամենայնի և յամենայն ժամանակի :

Սակայն ի՞նչպէս մոռնամ ես թէ երր դաստիարակութեան արդիւնուորելուն ձեռք կը զարնեմք , ահա՛ աեղւոյ , դշեանց դասատաց , սպասաւորաց և այլ և այլ պիտոյից և կարասեաց ծախքեր գիմոցնիս կը շարուին , և թէ որ ոյդ պէտքերը յեցնելու միջոցները պակսին , ընդունայն կը լինի ժամերով և օրերով դաստիարակութեան բարւոյն և օգտին համար խօսիլ և աղաղակել :

Հոգեւոր պիտոյից ։ Կատարման կը ձեռնարկեմք , և դարձեալ տեղիք և կարասիք , պիտոյք և անձինք ոյդ հոգեկան բարւոյն համար ալ անոնորինելի են . կրօնքն իսկ չպաշտուիր թէ ով արտաքին միջոցք պակասին անոր արտաքին պէտքերը հոգալու :

Առաքինութիւնք որտի արդիւնք կ'ըսուին , բայց սրտիւ աւարտեալ առաքինութիւնք հաղիւ թէ առաքինույն կրնան բաւականահալ , մինչ եռ տար վրայիսկ կ'երկրայիմ : Առաքինութիւն մը՝ թէ որ ինչպէս օրէն է , պիտի նպաստաւորէ դործողին և իւրնմանեաց , այս նպատակին համար ալ դարձեալ արտաքին միջոցներ պէտք են :

Զիայ մէջերնիս և ոչ ոք որ Հա-

յութեան բարւոյն համար չըսր-  
բոքի և չեռայ . չկայ , ունկըն-  
դիք իմ , ոչ թէ հոս , հապա բո-  
լոր Հայութեան մէջ՝ անձ մը , որ  
Հայ ըլլալը ճանչնայ և Հայութեան  
համար աշխատելու պարտքը չը  
ճանչնայ : Թէ որ կրօնից և դաս-  
տիարակութեան և առաքինու-  
թեան համար աշխատիլ պարտք  
է , թէ որ ասոնց ծառայելու հա-  
մար մամնաւորապէս նուիրեալ ան-  
ձինք պէտք են , ես համարձակ  
պիտի յաւելում թէ անհնար է որ  
այօշափով միայն Հայոց վրկու-  
թիւնը աւարտի : Ուրիշ բանի մըն  
ալ գեռ կարօտ եմք . Արտաքին  
միջոցներու առատանալուն կարօտ  
եմք :

Ես պէտք ունէի հոս երկարօրէն  
խօսիլ որպէս զի աղդին մէջ դիւ-  
րակեաց . և բարեկեաց վիճակին  
տարածուելուն , և Հայերուն ձեռ-  
քին ընդարձակելուն , և Հայաս-  
տանցւոյն և դաղթականին ունե-  
ւորութեան ճանքան բռնելուն  
հարկաւոր միջոցները մի առ մի  
բացատրեմ : Ունիմք մեք աղդին  
մէջ այնպիսի ազգասէր անձեր ,  
որք նախընթաց սերնդեան զաւակ  
ըլլալով երբ դաստիարակութեան  
պէտքն իսկ ծանուցեալչէր և դըպ-  
րոցներու կարգադրութիւնը և ա-  
ռատութիւնը դեռ սկսած չէր ,  
չեն կրցած ստանալ այն հմտու-  
թիւնները և ուսումնական սկզ-  
բունքները որք այսօր մեր վարժա-

րանաց մէջ կ'աւանդուին , և զորս  
մոր նոր մանկութիւնը սկսած է  
կանոնաւորապէս ստանալ , գոնէ  
մայրաքաղաքիս և դաւառագլուխ  
քաղաքաց մէջ : Այսպիսիք զուրկք  
ի գպրոցական ձրից՝ իրենց բնա-  
կան հանճարոյն զօրութեամբ և  
իրենց բարեօրտութեամբը արժա-  
նացեալ Աստուածային օրհնու-  
թեան նպաստիւք՝ կարողեղած են  
դրամական յաջողութիւններ ու-  
նենալ ի գործառնութիւնս իւր-  
եանց . և բաւական ունեւորու-  
թեան տէր ըլլալ , ուսկից և մաս  
մըն ալ կը զոհեն ի դիւր ազգին  
և ի գարման կարօտութեան նո-  
րա : Այս անձինք յաճախ համեստ  
հոգւոյ իսկ վիճակեալ գոլով , սո-  
վոր են իրենց ըրածը գուզաքեայ  
և չնչին տեսնել , իբր զի սովորա-  
կան լումայէն զատ բան մը չեն բե-  
րեր յասպարէղ աղդասիրութեան ,  
մինչ այլք կը բերեն անդ հանճար  
և ուսումն , գիրք և գրիչ , արթ-  
նութիւն և սրամտութիւն : Այս  
պիսիներուն համար ես պիտի ը-  
սեմ , որ եթէ իրենց համեստ ըգ-  
գածմունքները գովելի են և օդ-  
տակար իսկ , որովհետեւ լաւա-  
գունին խթան կ'ըլլան , սակայն  
մեք իրը ըստ ինքեան նկատելով  
պէտք է հաստատեմք թէ ձեռամբ  
նոցա կը շարժի գլուաւոր անիւն  
այդ մեքենային՝ որ ազգութիւն  
կը կոչուի և ազգիս ապագայն կը  
դիտէ : Ուր էր թէ այդ ծառա-

յութիւնը ընողներ շատնային .  
ուր էր թէ ասոնց նման առա-  
տառուր և համեստ անձննք ծագ-  
կեին միշտ առաւելութեամբ ի  
միմիթարութիւն և ի վայելս Հա-  
յութեան :

Ունի՞մք մեք միջոց մը այդ նը-  
պատակին համնելու :

Դժուարին է իւրաքանչիւր ան-  
հատը բանագատել որ իւր գործը  
գիտնայ , աշալուրջ և արթուն ըլ-  
լայ , գործունեայ և ժիր , փորձա-  
ռուր և կիրթ , որով և կարող լինի  
մանր պարագաներին օգուտ քա-  
ղել և ձախորդութիւններէն չը  
լքանելով՝ աներկժւան և հաստա-  
տուն քայլսվ՝ վաճառականութեան  
և ազգի ազգի արհեստից և որ-  
ծառնութեանց հետեւիլ և անկից  
արդիւնաւորիլ : Դժուարին է այս  
օր ելլալ և Հայաստանի մէջ այն-  
պիսի հանդարտութիւն և օրինաց  
պահպանութիւն և ապահովու-  
թեան տարածութիւն իրականա-  
ցնել , որ ամենայն շինականը կա-  
րող լինին երկրագործութեան պա-  
րագիլ , և արդասիրը համբարել ,  
և համբարեաները վաճառել և  
հարստանալ , և ապա յունեւո-  
րութենէ անտի ազգօգուտ ձեռ-  
նարկութեանց նույաստել : Դժուա-  
րին է այնչափ և այնպիսի հա-  
րուստներ գտնալ ոչք հազարաւոր  
և բիւրաւոր գահեկանաց նուի-  
րաստութեամբ գոյացնեն գու-  
մար մը մեծ և բաւական իլլու-

մբն ամենայն պիտոյից : Եթէ այս  
պէս ըլլայր , նաև մեր Հայաստանի  
սովորակը չէին տաղնապեր այսօր  
ինչպէս ցարդ կը տագնապին . և  
մինչ դժբաղզութիւնը կը թաղա-  
ւորէ հաղիւ հաղար ոոկոյ գու-  
մար մը հնար եղած է դեռ յղել  
անկէն : Եթէ կարող մեծատունը  
ըլլային ազգին մէջ , արդէն մի  
կամ երկու կամ սակաւ անձինք  
բաւական եղած պիտի ըլլային  
այդչափ գումար մը յղոծ ըլլալ  
ալգէն : Բարէ . Հայը այս բազգն  
ալ չունեցաւ . վասն զի Հայը չաւ-  
նի այդպիսի զործ մը ընել կրցով  
կամ այդպիսի զործ մը ընել ու  
զող անձեր : Բայց ոչ այսու պէտ-  
քը կը գագրի , մանաւանդ որ նոյն  
իսկ առօրեայ պէտքերը լեցնելու  
գարմաններն ու միջացները հայթ-  
հայթելն ալ իրեն պէտք մըն է 'ի  
գարմաննել :

Շատ դիւրին է ըսել .— Հայե՛ր  
հարուստ եղէ՛ք . Հայե՛ր , կարօ-  
տութենէ ազատեցէ՛ք . Հայե՛ր ,  
ազգին համար առատ նուերներ  
տուեք — շատ դիւրին քարոզ մըն  
է այս , և շատ դիւրին կը տես-  
նեմ եւս ամենուն սիրով շարժել  
ճշգրիտ կերպով նկարագրելով  
այն վիճակը՝ յորում կը գտնուի  
Հայաստան ի ներկայումս , և յո-  
րում ընդ իւր կը քարշէ նաև  
Հայութեան վատաքաղդիկ բաղ-  
դը : Այլ հարկ է որ այնպիսի մի-  
ջոց մը մտածուի , որ ինքնիրեն

դիւրընտել ըլլայ և գործնական, և մեր ազգին կարօտ վիճակէն կարօտութեան դարմանը քաղելու անհնար երեւցող գործը իրականացնելու յարմար :

Գիտեմք թէ յորդեալ հեղեղք առատաջուրք թումբերը կը քակեն և ամրարտակները կը խորտակեն, շինուածներ կը տապալեն և մայրեր կը խլեն. և չկայ զօրութիւն մը արուեստական և բնական՝ որ անոնց դէմ կարենայ դընել: Այդ յորդեալ հեղեղք այդպիս յորդեալ ոչ երկինքէն կ'իջնեն, և ոչ տեղէ մը կը բղխին. կամ երկինքէն իջած կաթիներու դումարումն են, կամ թէ մանր ականց և աննշանակ առուեստիներու միացում, և այսպէս լինելով իսկ ամենայնի յաղթող կը հանդիսանան: Ո՛չ երբէք կաթիլ մը ջուր ազդեցութիւն մը ունի, այլ կաթիլ կրկնեալ քարերը կը տաշէ, և կաթիլ դումարեալ արդելքները կը բառնայ: Կաթիլ մը ջուրն իսկ ուրեմն մեծ զօրութեան մը սկըզբունքն է. այդ սկզբան հետեւիմք և մեք :

Եթէ չունիմք այսօր այնպիսի մեծատուններ՝ որք հին ժամանակաց մէջ գործուածին համեմատ՝ կարող ըլլան իրենք իրենց եկեղեցիներ կառուցանել, բարեգործական հաստատութիւններ կանգնել, և բաւական եկամտիւ ճոխացնել, կամ թէ ուրիշ ազգաց

մէջ գործուածին նման հարիւրաւոր և հազարաւոր ոսկեոյ գումարներ նուիրել, որպէսզի կարեւոր գործառնութիւններ և ազգասիրական ձեռնարկներ և օգտակար հաստատութիւններ ի գըլուխ ելլան, ունիմք մեք այնպիսի իմն աղբիւր՝ որ քան զայսոսիկ զօրաւորագոյն է, եթէ գիտնամք մեք այնու իմաստութեամբ վարուիլ:

Եթէ մեք ազգին մէջ կարօտութեանց նպաստելու համար տըրուած գումարը մեծ ինչ չե՞ն ուրիշ ազգաց բաղդատմամբ, սակայն ունիմք պարագայ մը յոր Հայք կրնակը պարզենալ. և այս է նուիրաւուաց թուոյն բազմաւթիւնը: Եթէ օտար ազգ աց մէջ հինգ հարիւր ոսկին հինգ անձանց միայն ստորագրութեամբ կը գումարի, մեք մէջ յաճախ հինգ հարիւր անձանց ստորագրութեամբ հաւաքեալ է. և այս կէտն է ահա զարես միսիթարական և պարծանաց արժանի կը դատեմ: Յստիս արգիւնաւորագոյն է և առևել բարձր աղդասիրական զգածմանց արարածման նշանակ, որ հինգ հարիւր անձինք դանուին՝ որք իրենց համեստ քսակէն մի մի ոսկի հանելով ազգին օգտին նուիրեն, քան թէ հինգ հոգի միայն գտնել՝ որ իրենց աւելորդէն կարող լինին հարիւրական ոսկի առատաձեռնել աղդասիրական նը-

պատակի : Առջինին մէջ բարոյաւ կան մասը աւելի զօրաւոր է , և ազգային շաքժման նկատմամբ աւելի մեծ նշանակութիւն ունի . և ապագային մէջ ալ նաև նիւթական յոյսեր կ'աւելցնէ՝ երբ բաղդին հոլովման ատեն հինգ հարիւրէն մէկ մասը ընտրելագոյն վիճակի համար : Յայնժամ՝ սույդ կլնամք ըլլալ թէ շատ աւելի արդիւնք պիտի ունենամք մեք՝ որ միաքերը նախապատրաստեցինք և սիրտերը տրամադրեցինք և առաքինութիւնը տարածեցինք , քան նոքա որ թէպէտ բաղդին մէկ խաղով ունեցան քանի մը սակաւաթիւ անձեր՝ որ իրենց նպաստեցին , բայց չունեցան ընդհանուր տարածեալ ազգասիրական եռանդը :

Միայն պէտք է որ այդ կերպով և ոճով կարդադրեալ դորձմը այնչափ ընդարձակ ըլլայ և այնչափ տարածեալ , որ ինչ որ քանակէն կը պակսի՝ դոնէ թիւէն լրանայ , և մին միւսոյն տեղը բռնելով գումարը չտարբերի . մանաւանդ թէ լաւ կազմակերպելով դրութիւնը , առաւել արդիւնք հնար է քաղել այդ ոճէն՝ որ կաթիւներէ ժողովեալ անձրեւով ամենազօր հեղեղներ կը կազմէ :

Ումենայն անձն որ Հայ է , առանց խարութեան հասակի՝ սեռի՝ դորձոյ՝ վիճակի և կարողութեան , ամենաչնչին գումար մը

պարտաւոր ըլլայ տարուէ տարի յատկացնել ինպաստ ազգային պիտոյից , գաստիարակութեան , արկածից և կերպ կերպ ազգօգուտ ձեռնարկութեանց : Եթէ և այդ սակը երկու կամ երեք դահեկանի ամենաչնչին գումարը չանցնի , տակաւին ամենամեծ գումար մը կը հանդանակուի : Չորս միլիոն ժողովրդէ մը , եթէ և երեքն միայն կարող լինի արդեւամք մասնակցիլ այդ հայկական երկդրամենի կամ երեքդրամենի դրութեան , տակաւին վեց կամ ինն միլիոն գահեկանի ահաւոր զումարը կը հաւաքուի , որով Հայ ազգ ութիւնն կարող կը լինի գոդ հրաշքներ զործել յաշխարհի , և ազգին սովորական կամ անսովոր պէտքերն կարող կը լինի լիովին լրացնել : Եթէ այսպիսի գումար մը ամ ըստ ամէ ձեռուընս ըլլայր , ոչ ապաքին կը դադրէին որ և իցէ պէտքի համար նորանոր հանդանակութիւններ եռատորագրութիւններ բանալու հարկերը : Անոնք որ կը ձանձրանան տեսնելով որ հանապազօքեայ ինդրակը իրենց տանը գուոք կը բաղխնի՝ այս կամ այն ընկերութեան , այս կամ այն արկածի , այս կամ այն վարժարանի համար նպաստ հաւաքելու , միանդամ ընդ միշտ կ'ազատին այն ժանրատաղուկ հոգէ , որուն մէջ թէպէտ անտանելի չըլլայ տրուած գու-

մարը, բայց անտանելի սկսած են, կ'ըսեն, լինել շփոթութեանց և կրկնութեանց ձանձրութիւնները:

Այդ գրութեան գործադրութեան համար մասնաւոր կանոնագրութիւն մը կարեւոր է, սակայն ես կանոնագրութեան առունն անդամ բերանս առնելէ կը վախնամ: Ներեցէք ինձ ըսել, ունկնդիմք իմ, թէ կանոնամուլութեան ախտիւ վարակեալ եմք, և այդ ախտին հետեւութիւնը անդործութիւնն է: Երանի թէ նուազ ճշգեալ և ճշգրտեալ կանոններ ունենայինք, և անոր աեղ՝ աւելի գործունէութեան արդիւնք:

Գերբ ուրիշ անդամ սոյն այս լըսարանիս մէջ բանախօսելու պատիւն ունեցայ, ժանուցեր էի թէ ի 19 յուլիսի 1878 մեր Ազգանուէր Ամենապատիւ Պատրիարք Արքաղանը ի ժողով գումարեր էր՝ ազգին մէջ հմտութեամք և փորձառութեամք ճոխացեալ անձեռը. և Հայաստանի մէջ Հայոց հարստանալուն նպատակաւ ընկերութեան մը հաստատութիւնը առաջարկած: ի 9 սեպտեմբերի կանոնագրութեան ծրագիր մը ներկայացուած էր Բարեգործական անուան ներքեւ, և սոյն առաջարկութեան վրայ խօսելով կ'ըսէի ի յունվարի 1879. «Բայց այս առաջարկութիւնը դեռ անդործ մնացած է, և ի մօտոյ գոր-

ծադրեալ տեսնալու ալ յոյս մը չարուիր, թէ ունեած և ամենահարկաւոր նիւթ ու պարունակէ: »» Ուր էր թէ այսօր ձեր առջեւ չկարենայի պարծենալ տասուերեք ամիս անցնելէն ետքը, թէ խօսածս մարդարէութիւն է եղեր, վասն զի այսօր այ գեռ գործադրուած չէ: Այն օրէն ի վեր կանոնագրութեանց խմբագրութենով կարող և հանճարեղ գլուխներ յոդնեցան, և վերջապէս Տընտեսագիտական անուան ներքեւ նոր ծրագիր մըն ալ ընծայեցին: Բայց վայն ալ ըննելու համար ուրիշ մասնաժողով մը կազմուեցաւ, և կը ըսեմ թէ այս ևս նոր կանոնագրութիւն մը կը խմբագրէ և զեր, առջինը բոլորովին անդործադրելի դատելով: Անշուշտ երբ նոր մասնաժողովն ալ իւր գործը կատարէ և զինի վեց կամ ութն ամսոց իւր նոր առաջարկութիւնը մէջ տեղ բերէ, պիտի գտնուին ի հարկէ հինգ կամ երթն անձինք որք կարող պիտի ըլլան սոցա գործըն ալ իբր բնաւին անդործադրելի դատել և նոր կանոնագրութեան մը ձեռնամուխ լինել: Աւազ կորստեան ժամանակի: Եթէ և թերի կանոնագրութեամբ իսկ ճանբայ ելած ըլլային, ցարդ բաւական գործ մը տեսած կ'ըլլային, և ստացեալ փորձառութեամբ կանոնագրութեան թերին ալ լրացնելու առիթ կ'ունենային:

Այդ օրինակը զմեղ ամենեսին պէտք է խելահասդործէ կանոնամոլութենէ զգուշանալու . և ուր գեղեցիկ նպատակ և յարմար միջոց մը կը տեսնեմք , անմիջապէս դորժադրութեան սկսելու նաեւ առժամանակեայ և անկատար կանոնագրութեամբ , զոր ըստ դիպաց և առթից հնար է բարեփոխել օրինաւորութեանց պայմաններու պատկառ կալով յամենայնի , որք ընկալեալ ճշմարտութեանց պէս հաստատուն և ծանօթ սկզբունքներ դարձած են սոյն պիսի ձեռնարկութեանց նկատմամբ : Բաւական կը սեպեմուրեմն քանի մը գաղափարներ միայն ձեր ուշադրութեան ներկայացընել :

Հայ երկդրամենի կամ երեքդըրամենի դրութեան ենթարկեալ պէտք է որ ըլլայ ամեն Հայ ըստ մարդաթուի , առանց զանազանելոյ իւրք անձերը , ստնդեայ մանուկէն մինչև զառամեալ պառաւը , մուրացիկ աղքատէն մինչեւ միլիոնատէր մեծատունը : Հայ ազգութեան անդամակցութեան նշանակը պիտի ըլլայ տարեկան երկդրամենի կամ երեքդրամենի վճարումը : Անհնար է որ նաեւ մուրացկան մը չկարենայ իւր վաստըկածէն տարուէ տարի երկու կամ երեք դահնեկան չտալ այդպիսի ազնիւ նպատակի մը համար , ուսկից փոխադարձաբար իւ-

րեն ամենամեծ օգուտներ յառաջ պիտի գտն . վասն զի աղքատն առաջին՝ բարեգործական հաստատութեանց , ձրի վարժարանաց , և առատ նպաստից օգուտը կը քաղէ : Եթէ և հինգ անդամէ բաղկացեալ ընտանիք մը ըլլայ , տարեկան տասն կամտան նուհինդդահնեկանի գումար մը՝ նաև աղքատիկ տանուտեառն համար անտանելի բեռ մը չէ :

Ես չեմ փնտուեր ևս որ կարող եմ մեծատուն անձինք մէկէ աւելի բաժին ընդունին և վճարեն : Արտաքոյ կարդի նուերներ հնար է առանձնակի և անհատակի ընդունել և նոյն արկեղ մէջ պահպանել և նոյն նպատակի դորժածել : Սակայն մեծատանց հնար է աղքատաց բաժինը սրբել որչափ և որոց որ կամք ընեն այդ չնորհքը առատածեռնել :

Գործադրութեաննախկին պայմանն է ունենաւ ճիշդ աղիւսակ մը իւրաքանչիւր թաղին բնակչաց՝ ուր նշանակեալ պէտք է ըլլան ընտանիք մի առ մի և իւրաքանչիւր ընտանեաց անդամոց թիւը և անունները և վիճակը և կարողութեան աստիճանը : Մկրտելոց և ննջեցելոց արձանադիրերով այդ աշխարհագրի կամ ազգահամարի ձեռվ շնուրած տեարը հետզետէ կ'ուզզի և կը սրբագրուի : Այդ տետրները հիմքը ըլլան որ և իցէ հաւաքման կամ վճարման արժու-

զաւթեանց, մանաւանդ որ կարդագրութիւնն այդպիսի հանդանակութեան ողին է :

Գալով նպատակին, ամենէն պարզ կերպով պէտք կը համարիմ զայն նշանակել, որպէս զի և ոչ իւրիք ձախող մեկնութեանց կարենայ տեղի տրուիլ. և այդ նպատակն է. Հայոց դաստիարակութեան և բարոյական զարդարմանց աշխատիլ և նիւթական նեղութեանց մէջ նպաստել. Ահա նպատակ մը՝ զոր մինչև ցարդ արտօքոյ կարդի հանդանակութեամբ ամեն պարագայի մէջ ձեռք ձգել աշխատեցանք, վարժարաններ հաստատել դաստիարակութեան համար, լասրաններով և հրատարակութեամբ և թանդարաններով բարոյական զարդարմանց փոյթ տանիլ, հրդեհի և սովու և նմանօրինակ նիւթական նեղութեանց մէջ օժանդակ ձեռք մը կարկառել այսոցիկոր գթութեան կը կարօտին :

Իսկ ո՞ւմ յանձնել այդ ոչ աննըշանակ գումարին կիրառութիւնը, վասն զի բոլոր աղդը միանդամայն կը լինդը որ նոքա՝ որ այս գործոյն պատասխանատուութիւնը պիտի ստանձնեն, թէ՛ վստահութեան արժանի ըլլան դրամոյն աւանդապահ ըլլալով, և թէ՛ կարզութիւն ունենան խոհեմարար և խոհականութեամբ տրամադրել, որպէս զի դրամէն կարեւոր ար-

դիւնք ստացուին, և թէ պէտքեր ըստ կարգի իւրեանց ծանրակըշութեան հոգացուին,

Բնական կ'երեկի կեդրոնական ազգային իշխանութեան գիմել վասն զի նա է որ բոլոր աղդին անհատները կը միացնէ իբր բնական և օրինական գլուխ Հայ աղդութեան ։ Սակայն ես կը վերադասեմ՝ որ ամեն ժողովրդական գործունէութեան արդասիք՝ կեդրոնական և անկէց բղինեալ իշխանութեանց ձեռքը չըլլան. որպէս զի իշխանական գործոց հետ չը շփոթին, և ի մասինս նպաստը օրինական ազգային տրոց հետ չը խառնուի, որ բոլորովին տարբեր դրութեամբ և նպատակաւ սահմանեալ է ի Սահմանադրութեան իսկ ուստի ստեղծել նոր կեդրոն մը՝ որ կառավարէ մարմին մը՝ որ այդչափ տարածեալ մարմիններ և անդամներ կը պարունակէ յինքն, որչափ տարածեալ է Հայ ազգութիւն ի ամիւսս աշխարհի ։ Մարթիսկ է յանձնել այդ գործոյն կարգադրութիւնը և գործադրութիւնը ի ձեռս համախումբ ընկերական կեդրոնին որ հանդերձեալ է կազմուիլ Աքարատեան և Դպրոցասիրաց-Ալեւելեան և կիլիկեան ընկերութեանց միաւորութեանէն. և որ ազգին մէջ ընկերական մարմնոց կեդրոն մը ըլլալ սահմանեալ է, իրմէ վեր ու-

նենալով միայն Պատրիարքական իշխանութեան հսկողութիւնը, իբր զի պէտք է որ ամենայն ինչ որ յազգին է, ազգային կեդրոնին հսկողութենէն շվրիպի, որպէս զի ազգային մարմնոյն վրայ իբր անյարիր ինչ բոլորովին օտար և բաժանեալ չմնայ:

Բայց եթէ ուզուի նոր կեդրոնական մարմին մը ունենալ՝ բազկացեալ ի նուիրակաց իւրաքանչիւր քաղաքի կամ թաղի, որ ուրոշեալ ինչ աարեկան նպաստից դռւմար պատրաստել բաւականութիւն ունին, այդ ալ դարձեալ շատ ընտիր եղանակ մը կրնայ համը ըուիլ: Այլ որն և վերագասուի միշտ օգատակար կրնայ ըլլալ:

Ինձ բաւական է միայն որ իւրաքանչիւր Հայ սիրու այդ պարտքը իրեն նուիրական ճանչնայ, և իւրաքանչիւր Հայ՝ ուր որ և ինքն դանուի, որ երկրի բնակիչ, որ պետութեան հպատակ, որ դազափարի տէր՝ որ ըլլայ, բաւական է որ Հայ անունը կրէ սիրով ոպատուով, որպէս զի կարող չըլլայ իւր վրայէն նետել, որչափ թեթեւ ու չնչին, բայց և նոյնչափ շահաւեէտ և ազգօգուտ պարտքի մը վճարումը, որպէս է ըստ մարդաբնուի ընտանեացն երկու կամ երեքական գահեկանի վճարումը:

Այդ խորհուրդը զոր ձեր առջեւը բացատրել ուզեցի, բոլորովին նոր բան մը չէ ։ Շատեր սկը-

սան այս օրերը աստ և անդ քաշը զայն և մեկնաբանել, և իբր իրական և հնարաւոր միջոց մը առաջի գնել: Ոչ գաղափարելն է դժուարին, ոչ ըմբռնելն է դժուարին, ոչ կարգադրելն է դժուարին, ոչ գործադրելն է դժուարին, և ոչ հանդանակելն է դժուարին. միայն պէտք է համը բերութեամբ նախ անձանց կատարեալ ազիւսակ մը պատրաստել, և ապա իւրաքանչիւրին վընարմանց ցուցակը բռնել: Ցորչափ այդպիսի չնչին գումար մը կը ինդրուի, որ մէկ անդամէն կրնայ վճարուիլ յընթացս առաջին կիսոյ իւրաքանչիւր տարւոյն, շատ դիւրին կըլլայ իրարու ստորակարգեալ յանձնառուաց շարք մը հաստատել: Իւրաքանչիւր տանուտէր կամ ինսամակալու պէտք է յանձն առնու իրեն ընտանեաց մասը հանդանակել, տասը տանուտէրց մէջէն մէկը՝ իւր և մը նացեալ ինունց հանդանակութիւնները կը հաւաքէ, տասն տասնապետք կրնան իրենց հաւաքածը հարիւրապետի մը ձեռք յանձնել, և հարիւրապետաց վըրայ ալ թաղապետ կամ գիւղապետ կամ քաղաքապետ մը կը հաստատուի կամ կ'ընտրուի, որ իւր մասին ընդհանուր հաշիւը կը բռնէ, և իւր կեդրոնին հետ կը թղթակցի, թէ՛ հաւաքեալները հասցնելու և թէ՛ իւր շրջանակին

մէջ հանդիպած կարօտութիւնը իմացնելու և կարեւոր հրահանգը ընդունելու համար։ Գործը մասնաւոր կեդրոններէն ընդհաւուր կեդրոննին կը հաղափուի. և ահաւասիկինչպէս դիւրաւ հնարէ հաստատել դրութիւն մը նոր և գնքեցիկ, օգտակար՝ մանաւանդթէ հարկաւոր։

Եթէ գործադրութեան մասին մանը արդելքներ դիմացնիս ելան, հարկ չէ լքանիլ։ Առջի բերան շատ գժուար պիտի ըլլայ թերեւս Հայաստանի ներքին խորշերը մնացած գիւղերէն ալ պահանջել այնպիսի կարգադրութիւն և գործադրութիւն մը, որուն հազիւ թէ մայրաքաղաքիս կըրթեալ և զարդացեալ թաղերը կընան յարմար սեպուիլ։ Բայց և այնպէս պէտք է գիտնալ, թէ կարի իսկ մեծ և զօրաւոր են օրինակին ոյժը և նմանողութեան գրգիռը։ Եթէ մէկ տեղէն կամ մէկ կազմէն գործոյն սկզբնաւորութիւն տրուի, և կարեւոր հանգամանքներով ճախանայ սոյն ըսկեզրը, անտարակոյս կրնամք ըլլալ թէ նոյն գործը շատ ընդարձակ տարածութիւն կ'ունենայ։

Այդ սկզբնաւորութիւնն ալ ձեզմէ պիտի խնդրեմ, ո՞բնակիչը զասիրեան Միջագիւղի, ձեզմէ որ ձեր պարծանաց յիշատակագըս մէջ քանի մը ուրիշ արդիւնաւոր և պահանծալի կամորէն։

Թեանց փառքն արձանադրած էք Աղդային լսարաններն, օրիորդաց վարժարաններն, թատերականներկայացմունք, որք այժմ աղդին մէջ այնչափ բազմացած են, որ սովորական բան մը դարձան և չըլլան իսկ եպերելի կը դառնուի, ձեր թաղէն սկիզբ առած բաներ են։ Աղդային ընկերութիւնք իրաւ այս թաղէն դուրս սկսան, բայց հիներէն շատերուն այժմ կամ յիշատակն իսկ կայ կամ թէ ստուերը միայն շկայ Զօրաւոր և գործունեայ ընկերութեանց գասէն Արարատեանը՝ կընայ իրաւամք ձեր թաղին ծնունդը ըստիլ, որ իւր օրինակին նմանողութեամբ ուրիշ մեծ ընկերութեանց պատճառ եւ զաւ։ Իսկ այսոր առաւելի մնջօրութեան նախանձախնդրութեամբ՝ մեծ ընկերութեանց ձուլմամք և միացմամք զօրաւորագ ոյն մարմին մը կ'ստեղծուի, ուստի մեծամեծն կը յուսամես, և կ'սպասէ վըստահարար ազգն համօրէն։

Աղէ՛ ձեր պարծանաց յիշատակներուն վրայ մի՛ հանդչիք, և նոր պարծանքներ շատցնելու փութացէ՛ք, պարծանք ի գուծոց է և ի գուծոց միայն կ'ապացուցուի։ Թող ըսեն ամենեքեան թէ կենդանի է յաղգատէր թաղիս աղգատէր խայթք որ նորանոր ձեռնարկութեամբք դ'իտէ ազգին իւրաքանչիւր ժամանակի կարօտու-

թեան և պիտոյից դարման մը  
ընձեռել :

Այսօր Հայութեան պակասը ,  
ամենէն զգալի պակասը՝ արտա-  
քին միջոցաց նուազութիւնն է ,  
որով շատ ընտիր գաղափարներ  
կը թաղուին , և գործեր անկա-  
տար կը մնան : Հնար չէ սակաւա-  
թիւ անեւորաց վրայ այնպէս ծան-  
րանալ , որպէս թէ նոցա միայն  
պարտքը ըլլայ ազգին ամեն ծախ-  
քերը հոգալ . իւրաքանչիւր Հա-  
յուն մասնակցութենէն պիտի ար-  
տադրուի այդ միջոցը , ինչպէս  
իւրաքանչիւր Հայուն անդամակ-  
ցութենէն կը բաղկանայ ազգու-  
թիւնը : Ես նոր ընկերութիւն չեմ  
առաջարկեր , վասն զի այդ ընկե-  
րութիւնը նոյն իսկ ազգութիւնն  
է . և ով որ Հայ է , այդ կերպա-  
րանն միայն իրեն կը բաւէ , որ  
նոյին իսկ Հայ երկդրամենին կամ  
երեքդրամենին վճարող համրուի :  
Թո՞ղ Միջագիւղ սկսի , և մայրա-  
քաղաքիս ամեն թաղերուն մէջ  
տարածուի . ձայնն ու հռչակը  
զայն ամեն կողմ կը տանի : Ամեն  
թաղին և զիւղին և քաղաքին  
համար անձ մը միայն բաւական  
է , միայն թէ ամենայն ճգամբ  
այդ նպատակին աշխատելու կամ-  
քըն ունենայ . նա կարող է իւր  
թաղին բնակիչները յազդահամար  
առնուլ , անոնց բնակութեան հա-  
մեմատ տասնապետութիւններ և  
հարիւրագետութիւններ հաստա-

տել , և քիչ մը յորդորական խօս-  
քերով ամենքը ի գործ փութացը .  
նել : Եւ եթէ այդպիսի ազգօգուտ  
գրութիւն մը տարածելու համար  
ձեզի քարոզիչներ ալ հարկաւոր  
են որ գաւառէ ի գաւառ . թա-  
փառին և ամեն կողմ այդ ազ-  
գային գարմանին յարդարով և  
կարգադրով ըլլան , ապահով ե-  
ղեք որ ազգը ձեզի շատ ընտիր  
անձեր կը ներկայացնէ . և եթէ  
կ'ուզեք որ և իցէ մէկ մը՝ որ իւր  
բազմանքովը կարոզութեան թե-  
րին լցնէ , ահաւագիկ ես : Այդ  
նպատակին համար որ և իցէ աշ-  
խատանքէ չեմ քաշուիր , սակայն  
կը խնդրեմ որ գրութիւնը սկսի  
նախ կեղբոնանալ անկիւն մը , և  
չեմ կարծեր թէ ասկէ ընտիր հող  
կարենայ գանել իւեն այդ ազ-  
գասիրական հոգւոյն սերմը :

Կարօտ եմք ապաքէն , եղբարք ,  
վասն զի մեծամեծ պիտօյից դե-  
մաց մեծամեծ միջոցներ չունիմք .  
կարօտ եմք , վասն զի ազգին մե-  
ծամեծ օդնութիւններ ընելու կա-  
րող անձեր շատ քիչ ունիմք . կա-  
րօտ եմք , վասն զի այդ սակա-  
ւածիւ կարողներուն ոչ միշտ կամ-  
քը կարողութեան չափ մեծ է .  
կարօտ եմք , վասն զի մանր տուր-  
քերէ հաւաքեալ միջոցը չեն բա-  
ւեր համնիւ այն ամեն պիտօյից  
որք օր ըստ օրէ ոչ թէ կ'ընդար-  
ձակին այլ զգալի կ'ըլլան : Քսան  
տարի առաջ ինչչափ վարժարան

ունէինք, այսօր տասնապատիկը  
ունիմք, սակայն քսան տարի ա-  
ռաջ ինչափ վարժարանի կարօ-  
տութիւնը կ'զգայինք, այսօր հար-  
իւրապատիկը կ'զգամքը : Այն ա-  
տեն վարժարանի պէտքը զգացող  
շատ քիչ էր, այսօր նաեւ Հայաս-  
տանի լերան վրայ քսան տունով  
դիւզ մըն ալ իրեն համար վար-  
ժարան մը ունենալու հարկը կ'ըլ-  
զայ և բազմանքը կը շարժուի :  
Քանի մը տարի եւս և մեր պէտ-  
քերուն սահմանը շատ աւելի պի-  
տի ընդարձակի և շըլլայ թէ այն  
օրը յուսահատութեան մէջ լի-  
նումք, մեր կարօտութիւնը ողբա-  
լով :


Սովոյն աղէտը Հայաստանի գը-  
րեթէ մէկ երրորդը պատեց և  
դեռ տարածուիլ կ'սպառնայ .  
վասն զի անոր գիմացը առնելու  
միջոցներ կը պակսին : Գեռ շատ  
քիչ դրամ հաւաքուեցաւ այնչափ  
սովալլուկ և մահմերձ անձանց  
կեանքը պահպանելու : Եթէ հաս-  
տառուած ըլլար երկուամենի գը-  
րութիւնը, ոչ ապաքէն հնար կ'ըլ-  
լար նոյն օրին արժանաւոր գու-

մար և իրական նպաստ մը հաս-  
ցընել եղկեւեաց :

Սյնդէս համոզեալ եմ թէ ոչ  
ոք կարող պիտի ըլլայ զիս իրը  
եզջերուաքաղ դրութեան քարո-  
զիչ կարծել . իմ հաւատըս մեծ  
է՝ որ գործը հնարաւոր է և դիւ-  
րին, վասն զի ոչ ծանր է տուո-  
զին և ոչ դժուար հաւաքողին .  
միայն դեղինցիկ կարդարութեան  
մը արդիւնքն է . իսկ Հայքս գե-  
ղեցիկ կարգադրութեանց հան-  
ճարը և դիւտը և ոչ մէկու կը  
հարցնեմք :

Տարի մը միայն բաւական է,  
որ այսօր հոս տեղը հիմնուած  
գործ մը՝ կարող ըլլայ նաեւ ամեն  
կողմ, ամեն գաւառ և ամեն գիւղ  
թափանցել՝ մտնել և գործա-  
դրուիլ : Եթէ այսօր աղեկեղ սըլ-  
լու կը գոչեմք, կարօտ եմք .  
տարի մը անցնի, գործը արդիւ-  
նաւորի, միջոցներ գումարուին,  
մեր պիտոյից համեմատ գարման-  
ներ գատրաստելու բաւականա-  
նմք, և ես նորէն ձեր մէջ գա-  
լով հրճուալից աղաղակեմ . եղ-  
բարք, այլ եւս կարօտ չեմք :





գին 3 պըռաշ մէճիտ



